

# Լեզվաբանություն և բանասիրություն

## Սիրարժի Դավթյան

*Եվրասիա միջազգային համալսարանի վարժարանի փոխարևօրենս,  
ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ*

## ՆԱՎԱՍԱՐԴԸ ՈՐՊԵՍ ԱՄԻՍ ԵՎ ՏՈՆ

Սույն հոդվածում քննության է առնվում **Նավասարդ** բառը, որտեղ տրվում է նրա ծագումը, իմաստները: Որոշ մասնագետների կարծիքով այն իրանական (պարսկական) փոխառություն է (Հ. Աճառյան, Լ. Հովհաննիսյան), ոմանք էլ այն համարում են հին հնդկական փոխառություն (Ղ. Ալիշան): Ըստ որոշ աղբյուրների՝ Նավասարդը՝ Նոր տարին, տոնել են գարնանամուտին, քանի որ տարվա սկիզբը համարել են գարունը: Ըստ Ագաթանգեղոսի՝ Նավասարդ տոնը կատարվում էր Նավասարդի օրվան նվիրված ուրախության առթիվ:

**Հիմնաբառեր.** Նավասարդ, ամիս, օգոստոս, փոխառություն, տոն, Նոր տարի, Ամանոր:

Հայերենի ժամանականիշ բառերի թեմատիկ խմբի մեջ մտնում են ամսանունները, օրանունները, ժամանունները, շաբաթվա անվանումները, օրվա տարբեր պահերի անունները:

Տարին ունեցել է 12 ամիս՝ յուրաքանչյուրը՝ 30 օրից, և ավելյաց ամիսը՝ 5 օր:

Ամիս նշանակում է չափ, լուսին: Հր. Աճառյանը նշում է, որ հնդեվրոպական բոլոր լեզուներում ամիսը կոչվում է **մե** կամ **միս**, միայն հայերենն է, որ միս բառի սկզբին կցել է ամ (տարի) բառը և ստեղծել **ամիս** բառը: Այդպես լուսին և ամիս բառերը տարանջատվել են:

Հնում 1 ամսվա տևողությունը համարել են այն ժամանակաշրջանը, երբ արեգակը մի համաստեղությունից անցել է մյուսը: Այն մոտավորապես 30 օր է կազմել: Սրա հիման վրա էլ տարին բաժանել են 12 ամիսների:

Դիտարկենք ամսանուններից Նավասարդը:

Հայոց ամսանունները հայերին հայտնի են եղել դեռևս հեթանոսական ժամանակներից:

Քանի որ Բուն տոմարը սկզբնավորվել է մ.թ.ա 5-րդ դարի կեսերում, հասկանալի է, որ ամսանուններն իրենց ծագմամբ ու գործածությամբ կապված են այդ ժամանակների հետ և նույնիսկ ավելի հին կարող են լինել, քան մեր արեգակնային օրացույցային ժամանակի սկզբնավորումը<sup>1</sup>:

**Ամիս**– Ամսվա գործածությունը շատ հին ծագում ունի և կապված է Լուսնի փուլերի կրկնման պարբերաշրջանի հետ, որի տևողությունը 29 օր, 12 ժամ, 44 րոպե, 2.8 վայրկյան է: Տարին 12 ամիսների բաժանելը կապված է 12 համաստեղությունների թվի հետ<sup>2</sup>:

**Ամիս** բառի բացատրությունը տալիս է Հյուբշմանը:

Հյուբշմանը և հետագա գիտնականները կիրառում են հստակ բանասիրական մեթոդաբանություն՝ հնչյունական և այլ արտացոլումների հիման վրա առանձնացնելով բնիկ հայկական բառերը իրանական փոխառություններից: Այս մեթոդաբանությամբ պարզվում է, որ **ամիս** «**ամիս**» և **մահիկ** «**լուսին**» բառերը սերում են հնդեվրոպական միևնույն արմատից՝ \**mēnsos* ‘ամիս, լուսին’ (հմմտ. ցեղակից ձևերը՝ սանս. *ma s-* ‘ամիս, լուսին’, իրան. \**māh-*, հուն. *μήν*, լատ. *mēnsis*, ռուս. *месяц* և այլն), միայն թե առաջինն ուղղագծորեն ժառանգված է հնդեվրոպական նախալեզվից, մինչդեռ երկրորդը մեզ է անցել իրանական փոխառության տեսքով: Գր. Ղափանցյանը սրանց հետ նշում է նաև. գոթ. *mēna*,” *mond*”, սլավ. *měseci*, կիմր. *mīs*: Եվ նշում է, որ եթե հայոց **ամիս** բառի «**ա**» ձայնավորը հին է, ապա արմատը եղել է \* *a~ mēns*<sup>3</sup>:

Հայոց տոմարի և նրա ամիսների հին լինելու մասին գրել է Հովհաննես Իմաստասերն իր «**Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ**» գրքում: Նա նշում է, որ հայոց ամիսները գոյություն են ունեցել դեռևս Մովսես մարգարեից առաջ. «Այլ յառաջ քան զՄովսէս ո՛չ ուրեք էր գիտութիւն արուեստիս, –բայց միայն ի հայ ամսոցդ, որ էին յառաջ քան զՄովսէս, քանզի ասեն թէ ի ձեռն հոգւոյն, որ ազդէր ի նահապետսն, Հայկն՝ առաջին նահապետն Հայոց, զամիսքդ կարգեաց և զանուանս ուստերաց և դստերաց իւրոց ամսոցդ կոչեաց»<sup>4</sup>:

Մ. Խորենացին գրում է.«...մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին... և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք. Զշաբաթուց ասեն և զամսոց և տարեաց բոլորմանց...Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի»<sup>5</sup>:

Սա նշանակում է, որ հայոց ամսանունները գոյություն են ունեցել Մովսես մարգարեի ժամանակներից էլ առաջ:

Անանիա Շիրակացին գրում է.

«Տեսնելով առաջնոցն զլուսինն լցեալ և մաշեան, իմացեալ զանցաւո-

1 Է.Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1986, էջ 57

2 Հ. Բաղայան, Օրացույցի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1970, էջ 25:

3 Գր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1961, էջ 303:

4 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 224:

5 Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 188:

րութիւն կենաց իրեանց և ասացին , թէ՛ «է մեզ պատկեր »: Եւ դարձեալ զ՞ինչ են ամիսք և կամ ռվ եղ զանուանս նոսա: Անուանք ամսոցն ո՛չ էին յիսկզբանէ: Այլ՝ սկսեալ յԱդամայ մինչև ի Մովսէս, զգարնանամուտն տա-րեմուտ անուանէին ամենայն ազգք. և ամսոց անուանք ոչ գոյր, բայց միայն զառաջինն լուսինն զգարնան առաջին լուսին անուանէին և զկնի Բ երրորդ լուսին, և Գ .երրորդ., և Դ .երրորդ., մինչև ց. ԲԺ. ան դարձեալ յառաջինն դառնային: Իսկ անուանք ամսոց երբայեցոցն է Մովսիսէ անուանեցան՝ որ և կարգեաց զլրումն զատկաց նոցա , որ օր էր ելից նոցա յեգիպտոսէ և զամենայն տօնս նոցա նա կարգեաց: Իսկ վասն այլոց ազգացդ ամսոց՝ յայտնի ուրեք ո՛չ գտաք թէ յ՞ու –մէ օրինադրեցան , յիմաստասիրաց թէ թա-գաւորաց: Զի բազում ամիսք այն են, որ բազում թագաւորք յիրեանց անունն անուանեցին: Առաջին կայսրն Հռոմայ Գայիոս, որ կոչեցաւ Յուլիոս, սա ի թագաւերլն իւրում, զԿուինտիլիոս ամիս յուլիս անուանեաց ի վերայ անուն իւրոյ և վասն ծննդեան իւրոյ ի նոյն ամիսն: Նոյնպէս և Օգոստոս երկրորդ կայսրն զսեքտիլիոս ամիս յօգոստոս անուանեաց յիւր անունն և վասն ծննդեան իւրոյ ի նոյն ամիսն: Նոյնպէս և այլ ամիսքդ անուանեցան՝ յումէ և իցէ. զոր աւելորդ յամարիմ կարգաւ ասել: Բայց ամիսքդ հայոց ասացից զի հայ ամսոցդ անուանք յառաջ քան զդնել թուականին հայոց էին: Եւ ոչ քան զայն միայն, այլ և յառաջ քան զմարդեղութիւն բանին Աստուծոյ՝ անուանեալ էին ամիսքդ այդոքիկ. և այս է պատճառն: Զի Հայկ ոմն անուն աղեղնաւոր հսկայազգէ Հաբեթի որդւոյ Նոյի, եկեալ ի Բաբելոնէ տիրեաց Հայոց: Եւ բնակեալ ի հայս. և յանուն նորա կեչեցան հայք. նոյն-պէս որդւոց ր զդստերաց իւրոց եղ անուանս. Զոր առեալ հայոց զանուանս ուստերաց և դստերաց նորայ եղին ի վերայ ամսոցդ՝ վասն մեծարանաց հորն և զաւակացն . և են այսոքիկ: Նավասարդի. Հռոի. Սահմի. և Սահեկի. Արեգ. և Մ՛արերի դստերք էին Հայկին: Տրէ, Քաղոց, Արաց. և //Հրոտից , որդիք էին Հայկին: Իսկ մարգաց և հարաւանց, զոր այժմ ահկի կոչէն, այս ի գործոց անուանեցան, , զի ընդ այն ժամանակս ամառնայիսք էին սոքա»<sup>1</sup>:

Շիրակացիս հայոց ամսանունների ծագումը կապել է Հայկ Նահապետի որդիների և դուստրերի անվան հետ:

**Ամիս** բառի համար Գր. Ղափանցյանը տալիս է հատկյալ պատկերը.

Ամիս- (-ոյ, -ոց, -եան)=սանս. mas- «լուսին, ամիս», պրսկ. mah, հուն. θήν, լատ. mensis «լուսին», գոթ. mena «mond», սլավ. meseci, կիմր. mis: Հայոց **ամիս** բառի «ա» ձայնավորը եթե հին է, ապա արմատը եղել է \*a- me-nos<sup>2</sup>:

Այս բառը Հր. Աճառյանը համարում է հնդեվրոպական փոխառություն: Սրա հետ մեկտեղ նա այս բառը համարում է բնիկ հայերենյան բառ:

Ամսանունները բաժանվում են երկու խմբի՝ *սեռական հոլովածնով* կառույցներ և *-ական սծանցով* կազմված անուններ<sup>3</sup>: Այս խմբից դուրս են

1 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան , 1940, էջ 77:

2 Գր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Հայկական ՍՍՌ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1961, էջ 303:

3 Էդ. Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն,

**Նավասարդ և Արեգ** ամսանունները:

Ամսանուններից երեքը՝ Հռոփ, Սահմի, Տրէ ամսանունները եզակի սեռական են, իսկ չորսը՝ Քաղոս, Արաց, Մարգաց, Հրոտից, հոգնակի սեռական: Աղայանը տալիս է սրանց հիմնավորումը. «Հռոփ և Սահմի եզակի սեռական են, որովհետև յուրաքանչյուրը երկնային մեկ մարմին է, Տրէ-ն, քանի որ Տիրը մեկ հատ է: Քաղոց-քաղեքի ամիս, Մարգաց-մարգեքի ամիս և այլն»:<sup>1</sup>

Ինչպես գիտենք, հայերենի փոխառությունները ժամանականիշ բառերում ևս մեծ թիվ են կազմում հունարենից, պարսկերենից, պարթևերենից և այլն:

Պարսկերեն բառերը հիմնականում գրականության միջոցով են մեզ ավանդվել: Այս լեզվի ազդեցությունը հայերենի վրա դադարել է ԺԱ դարից<sup>2</sup>:

Հր. Աճառյանը նշում է, որ յուրաքանչյուր պարսկերեն բառ հայերենի հետ համեմատելու համար պետք է վերցնել նախ նրա պահլավերեն ձևը և այն միայն համեմատել հայերենի հետ, եթե այդ բառը հին շրջանի փոխառություն է<sup>3</sup>: Օրինակ պարսկերեն javedan բառը, հայերենում կլիսի **յաւիտեան**, որովհետև պահլավերեն ձևն է javetan:

**1. Նավասարդ**– Այն նախապես ամսանուն չի եղել, այլ՝ «նոր տարի, ամանոր» նշանակությամբ բառ, քանի որ իրանական փոխառություն է navasard՝ կազմված nava „նոր „, և sard „տարի,, բաղադրիչներից, որը ստուգաբանորեն նշանակում է „նոր տարի, ամանոր,,: Այն սկսվում էր օգոստոսի 11-ց և տևում էր մինչև սեպտեմբերի 9-ը: **Նաւասարդի** իրանական փոխառության տեսակետն են հայտնում նաև Հր. Աճառյանը և Լ. Հովհաննիսյան:

Նավասարդի՝ որպես ամսանվան, զուգահեռներ կան վրացերենում, որի առաջին ամիսը կոչում են **ախալծլիսա** «նոր տարի, ամանոր»:

Լեզվաբանները **նաւասարդը** ստուգաբանում են կամ ըստ զանդիկ պարսկերենի **Նովա- սերհատա** անվանման, որ նշանակում է «ամանոր՝ նոր տարի», կամ մանավանդ ըստ հնդկերենի՝ **Նավա- սարատայի**՝ «Նոր ջրերի տոն»:

Հր. Աճառյանը օրինակ է բերում **նոր և նաւասարդ** բառերը և նշում, որ առաջինը, որն ունի / տ, հ, ո/, բնիկ հայերեն է, իսկ երկրորդը, ունենալով մի որևէ պարսկական հատկանիշ / դ, փ, ա /, պարսկական փոխառություն է<sup>4</sup>:

Հմմտ. **Նաւասարդ** բառի տարբերակները իրանական լեզուներում պրսկ.՝ navsal, պիլ. navasard, զնդ. nava+ sardδa:

**Նաւասարդը** տոնել են տարբեր ամիսների՝ կապված հայոց մեծ թվա-

Երևան, 1986, էջ 58

1 Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Երևան, 1986, էջ 64:

2 Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, Երևան ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, 2013, էջ 333:

3 Հր. Աճառյան, նույն տեղում, էջ 234:

4 Հր.Աճառյան, նույն տեղում, էջ 223:

կանի հետ: «Արդ Ղրիմեցիէ ունինք թէ Հայոց թվին սկիզբը, Նաւասարդն, որ տարվո գլուխ եղավ Հայոց և սկիզբն թվականին, ըստ հռոմայեցվոց ամսույն ի հուլիսի ամսո, ի 11 եղեալ է. և հայտնություն, այսինքն հունվար 6-ը, հարացի ամսոյ 30-ն դիպեցավ, և ամն առաջին ամ նահանջի: Արդ այս անսէն պարագաները կատարելապէս կճշմարտվին 553 -ի վրա, հուլիս 11-էն սկսելով ամանորը կամ նաւասարդի 2-ը»<sup>1</sup>:

Ալիշանը հավանական է համարում **նավասարդի**՝ հին հնդկերենից ծագած լինելը՝ նավա- սարատա անունից, ինչը նշանակում է Նոր տարի կամ Նոր շար<sup>2</sup>:

«Նաւասարդ պարսկերենն փոխ առնված բառ մըն է և կը նշանակէ «Նոր տարի»: Նաւասարդ սանսկրիտ *նավասարայրա* (նոր տարի, ամանոր) բառին հայացած ձևն է : *Նաւա* արիական ժողովուրդներու հասարակաց բառ մըն է . հայերեն նոր, հին պարսկերեն նևի, նոր պարսկերեն նև, հունարեն նեոս ըսել է: Իսկ *սարդը* (տարի) որուն նոր պարսկերեն ձևն *սայ*, մեր լեզվի երիտասարդ բառին մեջ անկեղծ մնացեր է:<sup>3</sup>»

Հնդեվրոպական նույն արմատից է ծագում նոր բառը, որը կազմված է **neuo** հիմքից և **ro** մասնիկից:

Այս բառը միջին պարսկերենում նշանակել է նաև **լուսին**: Հավանաբար **նավա** բաղադրիչն ունի լուսին իմաստը. «զգարնանամուտն տարեմուտ առնէին ամենայն ազգք, և ամսոց անուանաք ոչ զոյր, բայց միայն զառաին լուսինն, գարնան լուսին, անուանէին առաջին և զկնի երկրորդ լուսին, և երրորդ և չորրորդ մինչև ցերկոտասաներորդն»<sup>4</sup>: Նշանակում է, որ Նաւասարդը պիտի նաև լուսնի տարի նշանակի: ( Նոր բառգիրք հայկազյան լեզվի, հ. 1, էջ 50, Արմատական բառարան, հ.1, էջ 179)

Նաւասարդը տոնել են դեռևս հեթանոսության ժամանակ:

Հայոց հնագույն ավանդություն առաջին ամիսը, կոչվում էր «եղջերվի տոնի (ամիս)», սակայն ավելի ուշ՝ իրանական ազդեցության փուլում, փոխարինվել է նաւասարդ «Ամանոր» բառով:

Նաւասարդ ամսի կրկնակ չունենալը տրված է հետևյալ հատվածում. «Վասն զի արաչութեան աւուրքն, ար յառաջ քան զլինելութիւն մարդոյն էին, որ են **Ե** ար, և կոչին աւել աւուրք, այն նաւասարդի ամսո կրկին է»<sup>5</sup>: Այսինքն՝ անհերքելի է, որ նավասարդը տարվա առաջին ամիսն է:

Հայկական տոմարի նաւասարդ ամիսը համարվել է գարնանային օրա-հավասարի օրը: Այսինքն՝ հայերը Նոր տարին տոնել են գարնանամուտին: Տարվա սկիզբը համարվել է գարունը: Այս մասին տեղեկանում ենք նաև Ագաթանգեղոսի «Պատմություն հայոց» գրքից: Հայոց Խոսրով թագավորը հարձակվում է Պարսկաստանի վրա: Այդ պատերազմը տևում է 10 տարի: Խոսրովն արշավանքներն սկսում է տարվա սկզբին՝ գարնանը. «Իսկ իբրև

1 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, 1912, ԿՊ, էջ 574:

2 Ղ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 76:

3 Ա. Օդարաշյան, Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, Երևան, 1978, էջ 16:

4 Մատենադարան, ձեռ. N 1999, էջ 75ա:

5 1999 ձեռագրի 1 ա էջ, 11-րդ դարի հեղինակ Հովհաննես Կոզեմի «Պատճառք կրկնակի» գլխում:

եկին հասին աուրք ջերոտ հարաւահողմն գարուն դրանցն բանալով՝ համբարձաւ թագաւորն ի կողմանց յանցանէ:»<sup>1</sup>

Այս ամսվա առաջին օրը հայերի համար նույնն է եղել, ինչ **Նովրուզը** պարսիկների համար, տոնի և ժողովրդական ուրախությունների մի օր: Գր. Մագիստրոս Պահլավունին իշխանը 11-րդ դարի սկզբներին իր նամակներից մեկում պահել է հայ ժողովրդական հին բանաստեղծներից մի հատված, որը երգում էին Գողթանի բնակիչները<sup>2</sup>.

Ո՞ տայր գծույն ծխանի  
Եւ գառաւօտն **Նաւասարդի**  
Ջվագելն եղանց և զվագելն եղջերուաց.  
Մեք փող հարուաք  
Եւ թմբկի հարկանէաք,  
Որպէս օրէնն է թագաւորաց:

Այս երգը վերագրվում է Արտաշես Ա թագավորին: Ինչպես նկատում ենք, սա նույն Արտաշես թագավորն է, որի մասին հիշատակում է Խորենացին:

Հին հայերի համար Նաւասարդի 1-ը եղել է ժողովրդական խրախճանքների տոն՝ Նոր տարվան նվիրված տոնակատարություններ:

Ինչպես նշեցինք, Նաւասարդը եղել է ն տոն, ն ամսանուն: Բայց ո՞րն է դրանցից եղել առաջինը:

Հովհան Մամիկոնյանը Նավասարդը հիշատակում է որպես ամսանուն. «Եւ տաւն սրբոյն Կարապետին տայր կատարել, որ աւր մի էր նաւասարդի»<sup>3</sup>:

Մ. Խորենացին «Հայոց պատմության» այն հատվածում, որտեղ պատմում է հայոց Տիգրան թագավորի կողմից իր եղբայր Մաժանի գերեզմանի վրա բազին կառուցելու մասին, Նաւասարդը որպես ամսանուն է օգտագործում. «Յորում պատմէ մեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բագնանց աւանի, որ ի Բագրեւանդ գաւառի, Բագին ի վերայ գերեզմանին շինեալ զի ի զոհիցն ամենայն անցաւորք վկայելեսցեն, և ընդունեցին հիւրք երեկոթորիւք: Յորժամ և զկնի Վաղարշ տօն աշխարհախումբ կարգեսց ի սկզբան ամին նորոյ ի մուտն նաւասարդի»<sup>4</sup>:

Փ. Բուզանդը Արշակի՝ Գնելին սպանելիս նույն հատվածում Նավասարդն առաջին անգամ օգտագործում է որպես ամսանուն, երկրորդ անգամ՝ իբրև տոնի անուն. «Ապա նաւասարդայ ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ, կոչել առ ինքն»...և ապա «եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զտօնս նաւասարդայ առանց քո անցուցանել»<sup>5</sup>:

Ինչպես նկատեցինք, մատենագիրները Նաւասարդն օգտագործել են ն

1 Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Տիղիս, 1909, էջ 16:

2 Կ. Կոստանեանց, Գր. Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 87:

3 Հ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարոնոյ, Երևան, 1941, էջ 106:

4 Մ. Խորենացի, գիրք Զ, գլուխ ԿԶ, էջ 200, Թիֆլիս, 1913:

5 Փ. Բուզանդ, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 181- 182:

որպես տոն, և՛ իբրև ամսանուն: Տոնի կիրառության ժամանակ դա նշում էին:

Ազաթանգեղոսը նշում է, որ Նաւասարդը հներն ըմբռնում էին իբրև ամսանուն, իսկ նոր տարվա տոնը անվանում է «Ամանորոյ ամենաբեր նոր պտղոյ տոն»՝ նվիրված «հիւրինկալ դիցն Վանատրի», և նշում է, որ այդ տոնը կատարվում էր Նաւասարդի օրվան նվիրված ուրախության առթիվ:

«Եւ զհիշատակս վկայիցն բերելոց ի տօն մեծ հոչակել, սնոտեացն պաշտման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոյ տօնին, հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութեան նաւասարդ աւուր: Ջի ժողովել ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու և սրբոյն վկային Աստուծոյ Աթանագինէի՝ յանմ աւուր խմբեալ ի նմին յաւանին տօնեսցին»<sup>1</sup>:

Կարելի է ենթադրել, որ Նավասարդի ամսանուն դառնալը տեղի է ունեցել ավելի ուշ, քան տոնը:

Ըստ Ազաթանգեղոսի՝ հայոց արքունիքի, զորքի և ժողովրդի մկրտությունը Արածանու ջրերում եղել է Նաւասարդին: Իհարկե, դա պիտի լիներ այն ժամանակ, երբ հնարավոր լիներ ջուրը մտնել: Ազաթանգեղոսը գրում է, որ մկրտությունը մի ամբողջ օր է տևել: Դա հաստատապես տաք եղանակին պիտի կատարվեր, քանի որ օձման յուղը ցրտին կսառչեր:

Գրիգոր Լուսավորչի կողմից Ս. Կարապետի տոնը նշվել է Նաւասարդի 1-ին. «և տաւն սրբոյն Կարապետին տայր կատարել, որ աւր մի էր Նաւասարդի»<sup>2</sup>:

Ս. Կարապետի տոնը նշվում է ամառվա սկզբին. սրանից կարելի է ենթադրել, որ այստեղ խոսքը Նավասարդ ամսի մասին չէ, այլ՝ տոնի:

«Եւ զհիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հոչակել, անուրեացն պաշտաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոյ տօնին, հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութեան Նաւասարդ աւուրի»<sup>3</sup>: Այսինքն՝ Նաւասարդը բերքահավաքի ժամանակ պիտի կատարվեր՝ կան առաջ, կան հետո:

Քանի որ Նավասարդ բառը (տոնը) իրանական փոխառություն է, Գ. Բրուտյանը կարծում է, որ պիտի գոյություն ունեցած լինի դրա նախնական հայկական տարբերակը, և չի բացառվում, որ դա լինի հենց Ամանորը<sup>4</sup>: Նա դա բացատրում է նրանով, որ որոշ ամսանուններ փոփոխվել են. սա ևս կարող է փոփոխված լինել: Եվ այդ փոփոխությունը սոսկ բառային պետք է լինի և ոչ բովանդակությամբ, քանի որ դրանք նույն իրողություններն են:

Նաւասարդը՝ Ամանորը, այնքան մեծ կարևորություն է ունեցել, որ այդ տոնին աստվածություն են նվիրել: Ըստ Ազաթանգեղոսի՝ դա Վանատուրն է եղել՝ այգեգործության, պտղաբերության և բերքի հովանավորը:

1 Ազաթանգեղոս, նույն տեղում, էջ 435, 836:

2 Յովհաննու Մամիկոնյանի եպիսկոպոսի, Պատմություն Տարոնոյ, Վենետիկ, 1889, էջ 35:

3 Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 464- 468, էջ 836:

4 Գ. Բրուտեան, Օրացոյց հայոց, Էջմիածին, 1997, էջ 373:

Վանատորին և Ամանորին նվիրված ամենամյա բերքի տոնը սկսվել է Նաուասարդի 1-ին՝ Ամանորին, և տևել է մինչև Նաուասարդի 6-ը: Այդ տոները կոչվում էին «*նաուասրդյան տոներ*»: Այս տոնը նվիրված է եղել հայոց աստվածների հայր Արամազդին<sup>1</sup>: Ապա տարբեր ժամանակներում նվիրվել է տարբեր մարդկանց, օրինակ՝ Հայկին:

Նավասարդը Հայկ նահապետի ավագ դստեր անունն է:

«Նավասարդը Հայկ Աղեղնավորի ավագ դուստրն էր: Գեղեցկուհի էր: Նրան անվանում էին հայոց սիրո և գեղեցկության աստվածուհի Աստղիկի նմանակը: Բայց նա չմահավան էր և չամուսնացավ ոչ ոքի հետ: Դարերը հազարամյակներ էին դառնում, հազարամյակները՝ շարեր, բայց Նավասարդի գեղեցկությունից մի մազ չէր պակասում: Եվ չէր էլ պակասի, տարին մի անգամ Աստղիկ աստվածուհին Նավասարդին տանում էր երկնային հեռաստանները, լողացնում նրան գեղեցկության ծովում և վերադարձնում երկիր: Եվ հազարամյակների ճամփաներին Նավասարդը մնում էր մշտամնա գեղեցկուհի: Նա է իր գեղեցկությամբ հմայիչ դարձնում Ամանորը և բերում այն բոլոր հայերի հարկերի տակ»:

---

1 Ռ. Համբարձումյան, Հայկական տոմար, Երևան, 1992, էջ 9:



**Сирарпи Давтян***Заместитель директора колледжа Международного университета Евразия,  
соискатель кафедры армянского языка и методики его преподавания АГПУ*

## НАВАСАРД КАК МЕСЯЦ И КАК ПРАЗДНИК

В данной статье рассматривается понятие Навасард, раскрывается его происхождение, а также значения. Некоторые специалисты (Г.Ачарян, Л. Оганесян) полагают, что это заимствование с иранского(персидского), другие же считают, что слово заимствовано с индийского (Г.Алишан). Согласно некоторым источникам, Навасард, Новый год, праздновали в начале весны, так как весна считалась началом года. По мнению Агатангегоса, праздник Навасард отмечался по случаю радости, посвященной дню Навасарда.

**Ключевые слова:** Навасард, месяц, август, заимствование, праздник, Новый год, Аманор.

**Sirarpi Davtyan***Deputy head of Eurasia International University College,  
Ph.D student of the Chair of Armenian Language and its Teaching Methods, ASPU*

## “NAVASARD” AS A MONTH AND HOLIDAY

The article examines the word “Navasard” discussing its origina and meaning. Some shcolars posit that it is an Iranian (Pershian) borrowing ( H. Adzaryan, L. Hovhannisyan), othes mention that it is Indian borrowing ( N. Alishan). According to some sources Navasard ( New Year) was celebrated in spring as it was the beginning of the year. As stated in Agatangeghos the holiday Navasard is dedicated to the joy of Navasard day.

**Key words:** Navasard, month, Augsust, borrowing, holiday, New Year, Amanor.